

## **ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

### **1. Նույնականացման Տվյալները**

Օգտագործման սույն ընդհանուր դրույթները և իրավական տեղեկատվությունը (այսուհետ՝ «Ընդհանուր Դրույթներ») վերաբերում են Գլովո ՍՊԸ-ի կայքին (այսուհետ՝ «Գլովո»), որի դոմենն է՝ [www.glovostore.com](http://www.glovostore.com), և դրա հետ կապված բոլոր կայքերին կամ կայքերին, որոնք Գլովոյի կողմից դոմենով կապված են, ինչպես նաև նրա դուստր ընկերություններին և գործընկերներին, ներառյալ Գլովոյի կայքերն ամբողջ աշխարհում (այսուհետ միասին անվանվում են՝ «Կայք»): Կայքը պատկանում է Գլովոյին: Օգտագործելով կայքը՝ դուք համաձայնում եք օգտագործման սույն դրույթներին: Եթե համաձայն չեք, ինդրում ենք զերծ մնալ այն օգտագործելուց:

Գլովոն սույնով հասանելի է դարձնում Գլովո կայքը և բջջային հավելվածը (այսուհետ միասին անվանվում են՝ «Հարթակ») օգտատերերի համար (այսուհետ՝ «Օգտատեր» կամ «Օգտատերեր»):

Համաձայն կիրառելի օրենսդրության դրույթների՝ ստորև ներկայացված են կայքի սեփականատիրոջ նույնականացման հետևյալ տվյալները.

- Ընկերության անվանումը՝ Գլովո ՍՊԸ
- Գրանցման հասցեն՝ Հայաստան, ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան փ., 2. 26/1
- Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 02841979

### **2. Օգտագործման Դրույթները**

Մուտք գործելով Հարթակ և կամովին ստեղծելով պրոֆիլ՝ բոլոր Օգտատերերը ընդունում և հստակորեն ու միանշանակ համաձայնում են սույն Օգտագործման և Պայմանագրային Ընդհանուր Դրույթներին, ինչպես նաև Գաղտնիության Քաղաքականությանը և Քուքիների Քաղաքականությանը:

### **3. Ապրանքներ և Ծառայություններ**

Գլովոն կայքի միջոցով առաջարկում է էջում առկա ապրանքները Օգտատերերի կողմից գնման համար, որոնք պարբերաբար թարմացվում են Գլովոյի կողմից՝ ելնելով դրանց առկայությունից: Օգտատերերը կարող են մշտապես ստուգել, թե որ ապրանքներն են հասանելի՝ օգտագործելով Հարթակում ներկայացված կատալոգը:

Թարմացված է՝ 05/03/2021

Բացի ապրանքներից, Գլովոն Օգտատերերին առաջարկում է էջում հասանելի այլ ծառայություններից օգտվելու հնարավորություն, որոնք կարող են տրամադրվել Գլովոյի կամ երրորդ անձանց կողմից:

Օգտատերը հստակորեն ընդունում է, որ եթե պահանջի որոշակի ծառայությունների կատարումը, որոնք տրամադրվում են երրորդ անձանց կողմից, դրանք կկառավարվեն երրորդ կողմերի դրույթներով և պայմաններով, և Գլովոն պատասխանատվություն չի կրում դրանց համար:

Օգտատերը կարող է վճարել իր **Գլովոսթոր** օգտահաշվի ակտիվացման համար, որը առկա լինելու դեպքում ներառում է որոշակի ծառայություններ:

#### **4. Մուտքը եւ Գրանցումը Օգտատերերի համար**

Հարթակի Օգտատեր լինելու համար անհրաժեշտ է, որ դուք բավարարեք հետևյալ պահանջները.

- Դուք պետք է լինեք առնվազն 18 տարեկան:
- Հարթակում գրանցվելիս Դուք պետք է ճշմարիտ լրացնեք գրանցման ձևաթղթի պարտադիր դաշտերը, որոնք պահանջում են անձնական տվյալներ (անուն, երկիր և էլեկտրոնային փոստ), ինչպես նաև պատվեր գրանցելիս պահանջվող տվյալները (հեռախոսահամար, առաքման հասցե, վճարային տվյալներ և բանկային քարտի համար):
- Դուք պետք է համաձայնեք սույն Օգտագործման և Պայմանագրային Դրույթներին:
- Դուք պետք է համաձայնեք Գաղտնիության և Տվյալների Պաշտպանության Քաղաքականությանը:
- Դուք պետք է համաձայնեք Քուլքիների Քաղաքականությանը:

Օգտատերը երաշխավորում է, որ Հարթակի գրանցման ձևաթղթերում Գլովոյին տրամադրված իր ինքնության և գործունակության վերաբերյալ բոլոր տեղեկությունները ճշմարիտ են, ճշգրիտ և ամբողջական: Բացի այդ, Օգտատերերը պարտավորվում են թարմացնել իրենց տվյալները:

Եթե Օգտատերը տրամադրում է որևէ կեղծ, ոչ ճշգրիտ կամ թերի տեղեկատվություն կամ եթե Գլովոն կարծում է, որ կան հիմնավոր պատճառներ կասկածելու այդ տեղեկատվության ճշմարտացիությունը, ճշգրտությունը կամ ամբողջականությունը, Գլովոն կարող է մերժել Օգտատիրոջ՝ Հարթակ մուտք գործելու և Հարթակից օգտվելու, ինչպես նաև Հարթակում գետնողված բովանդակություն և (կամ) ծառայություններ մուտք գործելու և դրանցից օգտվելու հնարավորությունը:

Հարթակում գրանցվելիս Օգտատերերը պետք է ընտրեն օգտանուն և գաղտնաբառ: Ե՛վ օգտանունը, և՛ գաղտնաբառը խիստ գաղտնի են, անձնական և ենթակա չեն փոխանցման: Օգտահաշիվների անվտանգությունը բարձրացնելու համար Գլովոն խորհուրդ է տալիս Օգտատերերին չօգտագործել նույն մուտքի տվյալները, որոնք

օգտագործվում են այլ հարթակներում: Եթե Օգտատերը օգտագործում է նույն մուտքի տվյալները, ինչ այլ հարթակներում, Գլուխն չի կարողանա երաշխավորել օգտահաշվի անվտանգությունը կամ համոզվել, որ Օգտատերը միակ մարդն է, ով մուտք է գործում իր պրոֆիլ:

#### **4.1 Պրոֆիլ**

Հարթակում իրենց գրանցումն ավարտելու համար Օգտատերերը պետք է տրամադրեն որոշակի տվյալներ, ինչպիսիք են՝ օգտանունը, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը և բանկային քարտի տվյալները, ի թիվս այլոց: Երբ ավարտեն գրանցման գործընթացը, բոլոր Օգտատերերը կկարողանան մուտք գործել, ամբողջականացնել և (կամ) խմբագրել իրենց պրոֆիլը և (կամ) ապագրանցվել, ինչպես կամենան: Գլուխն չի պահպանում օգտատերերի վճարային տվյալները, որոնք մշակվում և պահպանվում են վճարային ծառայություններ մատուցողի կողմից, ինչպես նկարագրված է սույն Դրույթներում և Պայմաններում և Գաղտնիության Քաղաքականությունում:

Ինչ վերաբերում է բանկային քարտի տվյալներին, սույնով հատուկ նշվում է, որ Գլուխն չի պահպանում Օգտատերերի տրամադրած տվյալները, որոնց պրոցեսինգն իրականացվում է վճարման պրոցեսորի (ֆինանսական հաստատության) կողմից, որի հետ Գլուխն առևտրային պայմանագիր ունի՝ Կայքի միջոցով գնված ապրանքների վճարումների պրոցեսինգի համար:

#### **4.2 Կրեդիտային քարտի Գողություն և Յուրացում**

Քանի որ Գլուխն չի կարող երաշխավորել գրանցված Օգտատերերի ինքնությունը, Օգտատերերը պարտավոր են տեղեկացնել Գլուխին, եթե նրանք որևէ ապացույց ունեն, որ իրենց Գլուխ պրոֆիլին կցված կրեդիտային քարտը գողացվել է և (կամ) խարդախությամբ օգտագործվել է երրորդ անձի կողմից: Սա նշանակում է, որ եթե Օգտատերը չհայտնի Գլուխին նման յուրացման մասին, Գլուխն պատասխանատվություն չի կրի Օգտատիրոջ օգտահաշվի խարդախ օգտագործման համար, որը կարող է կատարվել որևէ երրորդ անձի կողմից, քանի որ Գլուխն և նրա վճարային հարթակը ակտիվորեն գործում են՝ պաշտպանելու Օգտատերերին անվտանգության համապատասխան միջոցներով: Գլուխն Օգտատերերին առաջարկում է իրենց կրեդիտային քարտի գողության, յուրացման կամ կասկածելի չարաշահման մասին հայտնել ոստիկանության համապատասխան մարմնին:

Անհրաժեշտության դեպքում Գլուխն պարտավորվում է համագործակցել Օգտատիրոջ և իրավասու մարմինների հետ, որպեսզի հավաստի ապացույցներ տրամադրվի սխալ գանձված գումարի վերաբերյալ: Խարդախության դեպքում Գլուխն իրեն իրավունք է վերապահում ձեռնարկել

Թարմացված է՝ 05/03/2021

ցանկացած անհրաժեշտ գործողություն, եթե նրա վրա բացասական ազդեցություն է ունեցել կայքի չարաշահումը:

## **5. Գները, ժամկետները եւ Վճարման եղանակները**

Գլովոն ստանում է Հաճախորդների կողմից ապրանքների և (կամ) ծառայությունների համար վճարումները Էլեկտրոնային փողեր թողարկող վճարահաշվարկային կազմակերպության միջոցով: Էլեկտրոնային փողեր թողարկող վճարահաշվարկային կազմակերպությունները իրավասու են տրամադրելու կարգավորվող վճարային ծառայություններ բոլոր այն տարածքներում, որտեղ գործում է Գլովոն և համապատասխանում են գործող օրենսդրությանը, որը կիրառելի է այնպիսի հարթակների համար, ինչպիսին է Գլովոն:

Վճարելու համար Օգտատերերը պետք է հետևեն Էկրանին հայտնվող հրահանգներից յուրաքանչյուրին և տրամադրեն հետևյալ տեղեկությունները՝ ա) քարտի համարը. բ) քարտի գործողության ժամկետը. և գ) Էկրանին հայտնվող ցանկացած այլ պահանջվող տեղեկատվություն: Այս նպատակների համար տրամադրված ողջ տեղեկատվությունը ծածկագրված է՝ առավելագույն անվտանգությունն ապահովելու նպատակով: Օգտատերերի կողմից մուտքագրված տեղեկատվությունը տեղակայված է անվտանգ սերվերում, որը պատկանում է վճարումների պրոցեսինգ իրականացնող -ֆինանսական հաստատությանը: Գլովոն նաև նշում է, որ ինքը ոչ մի դեպքում չի պահպանում վճարման տերմինալի (gateway) միջոցով Օգտատերերի կողմից տրամադրված վճարային տվյալները:

Որոշ դեպքերում Օգտատերերը կարող են ընտրել վճարման այլընտրանքային եղանակ և վճարել բանկային փոխանցման միջոցով: Նման դեպքերում Գլովոն թողարկում է ամսական հաշիվ-ապրանքագիր, որը ներառում է տվյալ ամսվա բոլոր պատվերները, և Օգտատերը հաշիվ-ապրանքագրի ստացման օրվանից 10-օրյա (տասնօրյա) ժամկետում պետք է վճարումը կատարի բանկային փոխանցման միջոցով, առանց իր կրեդիտային/դեբետային քարտի մանրամասները տրամադրելու:

Համաձայնեցված ժամկետում և, ամեն դեպքում, պատվերի գրանցման օրվանից սկսած 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում Գլովոն Օգտատիրոջ կողմից գնված ապրանքները առաքում է այդ նպատակով նախատեսված պատվերի ձևաթղթում նշված Գնորդի հասցեով: Յուրաքանչյուր պատվերի համար կիրառելի առաքման ծախսերը կրում է Գնորդը:

Առաքման ժամանակը պետք է լինի այնքան, որքան հստակորեն նշված է յուրաքանչյուր ապրանքի համար և միշտ հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Գլովոյի կողմից պատվերի հաստատման օրվանից սկսված:

Թարմացված է՝ 05/03/2021

Եթե Օգտատերը ստանա թերի պատվեր, Գլովոն կառաքի բացակայող ապրանքները պատվերի առաքման օրվանից սկսված 7 օրվա ընթացքում: Եթե Գլովոն չկարողանա կատարել պատվերը այս ժամկետում, Օգտատերը կստանա փոխհատուցում այն ապրանքների արժեքի համար, որոնք Գլովոն չի կարողացել առաքել:

Վճարային ծառայություններ մատուցողի միջոցով, ով Գլովոյի ենթակապալառուն է միմիայն վճարման եղանակը ստուգելու նպատակով՝ Գլովոն իրավունք է վերապահում, որպես խարդախության կանխարգելման միջոց, պահանջել նախավճարային սառեցում Հարթակի միջոցով պատվիրված ապրանքների համար: Նման նախավճարային սառեցումը ոչ մի դեպքում չպետք է ենթադրի պատվերի ամբողջ գումարի սառեցում, քանի որ դա կկատարվի բացառապես երբ ապրանքները հասանելի դառնան օգտատիրոջը կամ սույն դրույթներով և պայմաններով սահմանված այլ պատճառներով պայմանավորված դեպքերում:

Օգտատերերին ավելի մեծ աջակցություն տրամադրելու նպատակով՝ Գլովոն կլինի նրանց առաջնային կոնտակտը և պատասխանատվություն կկրի հարթակում կատարված վճարումների համար: Նման պարտականությունը ներառում է վերադարձի, չեղարկման գործողություններ և վեճերի լուծում սկզբնական փուլում, սակայն դա չի սահմանափակում Գլովոյի գործողությունները, որոնք կարող են ձեռնարկվել տեղական ձեռնարկությունների նկատմամբ՝ որպես Օգտատերերի կողմից պատվիրված ապրանքների միակ ֆիզիկական վաճառողներ:

Վեճի դեպքում Գլովոն տրամադրում է առաջնային աջակցություն և իր հայեցողությամբ որպես բարի կամքի դրսևորում՝ նպատակահարմար լինելու դեպքում կարող է վաուչեր տրամադրելու միջոցով փոխհատուցել Օգտատիրոջը:

Եթե Օգտատերը պատվերի ընթացքում առնչվում է որևէ խնդրի հետ, նա կարող է կապ հաստատել Գլովոյի հաճախորդների սպասարկման բաժնի հետ՝ Օգտատերերին Հարթակի միջոցով հասանելի դարձված միջոցներով:

## **6. Չեղարկում, Ապրանքի Վերադարձ**

Ցանկացած Հաճախորդ, որը ցանկանում է վերադարձնել ապրանքը կամ բողոք ներկայացնել, պետք է կապ հաստատի հաճախորդների սպասարկման բաժնի հետ հետևյալ հասցեով՝ [infoglovostore@glovoapp.com](mailto:infoglovostore@glovoapp.com):

Պայմանով, որ գնված ապրանքի բնույթը թույլ է տալիս և ապրանքները չեն օգտագործվել կամ որևէ կերպ վնասվել, Օգտատերերը ունեն 14 օրացուցային օր վաճառքը և գնումը չեղարկելու համար: Նախորդ կետով սահմանված 14-օրյա ժամկետը հաշվարկվում է Գնորդի կողմից գնված ապրանքների ստացման օրվանից: Ամեն դեպքում, համարվում է, որ Գնորդը

Թարմացված է՝ 05/03/2021

տեղյակ է չեղարկման մասին Կայք մուտք գործելու պահից և բոլոր դեպքերում՝ պատվերը գրանցելու պահից՝ հաշվի առնելով, որ օգտատերերից պահանջվում է կարդալ և ընդունել սույն Ընդհանուր Դրույթները:

Պատվերի վերադարձը պետք է տեղի ունենա Հաճախորդների սպասարկման բաժնի միջոցով, որպեսզի կազմակերպվի պատվերի հավաքագրումը Գևորգի հասցեից կամ համապատասխան վերադարձը: Գլովոն վերադարձնում է կրեդիտային քարտի միջոցով ստացված գումարները, սակայն Գևորգը կրում է ապրանքի վերադարձի հետ առնչվող ուղղակի ծախսերը, եթե առաքված ապրանքները ոչ պատշաճ որակի չեն եղել, ինչպես նախատեսված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և սպառողների իրավունքների պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով: Պատվերի վերադարձի հետ առնչվող ուղղակի ծախսերի հատուցումը Գևորգի կողմից կատարվում է պայմանագիրը լուծելու որոշման մասին Գևորգի կողմից ծանուցման օրվանից առավելագույնը 14 օրացուցային օրվա ընթացքում: Հաճախորդի կողմից գնված ապրանքների վերադարձի դեպքում հավաքագրման ծախսերը կրում է հաճախորդը, եթե առաքված ապրանքները ոչ պատշաճ որակի չեն եղել:

Նման ծախսերը պետք է հավասար լինեն ապրանքների առաքման համար կիրառելի ծախսերին: Չնայած վերը նշվածին, չեղարկման և (կամ) պայմանագիրը լուծելու իրավունքը չի գործում այն դեպքերում, երբ այն անհնար է իրականացնել՝ պայմանավորված գնված ապրանքների բնույթով, երբ ապրանքների վերադարձը չի պահանջվում սպառողների իրավունքների պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքով: Այնուամենայնիվ, սա չի սահմանափակում այն դեպքերը, երբ ստորև նշված պայմաններից որևէ մեկը չի կատարվում (և արդյունքում վերադարձը կամ չեղարկումը չի ընդունվի)՝

- Ապրանքները չպետք է օգտագործված լինեն, դրանց ապրանքատեսքը, սպառողական հատկանիշները, կապարակնիքները, ապրանքային պիտակները, ինչպես նաև սպառողին տրված վճարման փաստը հավաստող փաստաթուղթը կամ այլ հաշվարկային փաստաթուղթ պետք է պահպանված լինեն:
- Ապրանքները չպետք է լինեն պարենային:
- Ապրանքների պատրաստումը և մատակարարումը չպետք է իրականացված լինեն գևորգի հատուկ պահանջներին համապատասխան, կամ ապրանքները չպետք է անհատականացված լինեն:
- Ապրանքները չպետք է ունենան արագ փչացման, քայքայման կամ որակի փոփոխության հատկություն:
- Կապարակնքված ապրանքները, որոնք վերադարձման ենթակա չեն առողջապահական կամ հիգիենիկ նկատառումներից ելնելով,

*Թարմացված է՝ 05/03/2021*

մատակարարվելուց հետո չպետք է ապակապարակնքվեն գնորդի կողմից:

- Կապարակնքված ձայնային կամ տեսաձայնային ձայնագրությունները կամ կապարակնքված ծրագրային ապահովումները մատակարարվելուց հետո չպետք է ապակապարակնքվեն գնորդի կողմից:
- Ապրանքները չպետք է լինեն թերթեր, ամսագրեր, գրքեր կամ այլ տպագիր նյութեր:

*Դուք միայն պետք է լրացնեք և ուղարկեք այս ձևաթուղթը, եթե ցանկանում եք լուծել պայմանագիրը:*

*Ում՝*

*Սույնով տեղեկացնում եմ ձեզ, որ լուծում եմ հետևյալ ապրանքի վաճառքի պայմանագիրը՝*

- *Պատվերի համարը՝*
- *Պատվերի ստացման ամսաթիվը՝*
- *Օգտատիրոջ և սպառողի անունը՝*
- *Օգտատիրոջ և սպառողի հասցեն՝*
- *Օգտատիրոջ և սպառողի ստորագրությունը (միայն եթե այս ձևաթուղթը ներկայացվում է թղթի վրա)՝*
- *Ամսաթիվը՝*

Ցանկացած Օգտատեր, որը ցանկանում է վերադարձնել պատվերը չեղարկման ժամկետից հետո, պետք է կապ հաստատի աջակցման թիմի հետ: Հստակորեն նշվում է, որ նման դեպքում Գլովոն իրավունք կունենա Օգտատիրոջից գանձել ապրանքների առաքման և վերադարձման ծախսերը:

## **7. Պրոմո Կոդեր եւ (կամ) Այլ Առաջարկներ կամ Չեղչեր**

Պրոմո կոդերը և (կամ) Հարթակում առաջարկվող այլ առաջարկները կամ զեղչերը պետք է ճիշտ մուտքագրվեն հավելվածում մինչև պատվերը գրանցելը: Հակառակ դեպքում դրանք ուժի մեջ չեն մտնի, և Օգտատերը չի կարողանա օգտվել դրանցից:

Թարմացված է՝ 05/03/2021

Յուրաքանչյուր անգամ, երբ չեղարկում պահանջվի Գլովոյի կողմից, պրոմո կողը և (կամ) այլ առաջարկը կամ գեղչը ուժի մեջ կմնան Հաճախորդի կողմից հետագա օգտագործման համար:

Գլովոն իրեն իրավունք է վերապահում չեղարկել պրոմո կոդերը և (կամ) առաջարկվող այլ առաջարկները կամ գեղչերը, եթե տեղեկանա դրանց խարդախ օգտագործման մասին (օրինակ, ի թիվս այլոց, պրոմո կոդի օգտագործումը այն անձի կողմից, ով դրա օրինական ստացողը չէ, կոդերի զանգվածային տարածման դեպքերում կամ կոդերի կամ գեղչերի վաճառքի դեպքերում): Ավելին, Գլովոն իրեն իրավունք է վերապահում օգտատերերի նկատմամբ պատժամիջոցներ կիրառել այն գումարի չափով, որքանով Ընկերությունը խաբվել է նման օգտագործման արդյունքում:

## **8. Օգտատիրոջ Պարտականությունները**

Օգտատերերը լիովին պատասխանատու են իրենց պրոֆիլի և Հարթակի այլ բովանդակության պատշաճ օգտագործման և մուտք գործելու համար՝ համաձայն այն երկրի գործող օրենսդրության, լինի դա ազգային թե միջազգային, որտեղից նրանք օգտագործում են Հարթակը, ինչպես նաև բարեխղճության, բարոյականության, ընդհանուր ընդունված սովորույթների և հասարակական կարգի սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես, Օգտատերերը պարտավորվում են ջանասիրաբար պահպանել Օգտագործման Ընդհանուր Դրույթներով սահմանված կանոնները:

Օգտատերերը պատասխանատու են իրենց անհատական օգտանուններն ու գաղտնաբառերը ճիշտ մուտքագրելու համար, որոնք ենթակա չեն փոխանցման և պետք է լինեն բավական բարդ, ինչպես նաև պատասխանատու են նույն օգտանունն ու գաղտնաբառը չօգտագործելու համար, որոնք օգտագործվում են այլ հարթակներում: Այս ամենի նպատակը Հարթակին չպատկանող երրորդ անձանց խարդախ օգտագործումից Օգտատերերի օգտահաշիվը պաշտպանելն է:

Օգտատերերը պետք է գերծ մնան իրենց պրոֆիլի և Հարթակի այլ բովանդակության օգտագործումից, որոնք հետապնդում են անօրինական նպատակներ կամ կարող են անօրինական հետևանքներ առաջացնել և որոնք վնասում են երրորդ կողմի իրավունքները և շահերը կամ որոնք կարող են որևէ կերպ վնասել, անհասանելի դարձնել, վատթարացնել Հարթակը կամ խափանել Հարթակի աշխատանքը և դրա բովանդակությունն ու ծառայությունները: Բացի այդ, Օգտատերերին արգելվում է խոչընդոտել այլ Օգտատերերի կողմից Հարթակի բնականոն օգտագործմանը:

Գլովոն կարող է չկրել խմբագրական պատասխանատվություն և Գլովոն բացահայտորեն նշում է, որ իր կարծիքը չի նույնացնում որևէ կարծիքի հետ, որը կարող է հրապարակվել Հարթակի Օգտատերերի կողմից, որոնց



*Թարմացված է՝ 05/03/2021*

հետևանքների պատասխանատվությունը կրում են բացառապես դրանց հեղինակները:

Ցանկացած անձ, որը խախտում է վերը նշված պարտականությունները, պատասխանատվություն է կրում իր կողմից պատճառված ցանկացած կորստի կամ վնասի համար: Գլովոն պատասխանատվություն չի կրի որևէ հետևանքների, կորստի կամ վնասի համար, որոնք կարող են առաջանալ երրորդ անձանց կողմից նման անօրինական օգտագործումից կամ մուտքից:

Ընդհանուր առմամբ, Օգտատերերը պարտավորվում են ներառյալ, բայց առանց սահմանափակման.

- Չերծ մնալ Հարթակը ամբողջությամբ կամ մասամբ փոփոխելուց կամ ձևափոխելուց՝ շրջանցելով, անհասանելի դարձնելով կամ որևէ այլ կերպ խափանելով դրա գործառույթները կամ ծառայությունները.
- Չերծ մնալ արդյունաբերական և մտավոր սեփականության իրավունքների կամ անձնական տվյալների պաշտպանության օրենսդրությունը խախտելուց.
- Չերծ մնալ Հարթակն օգտագործելիս այլ Օգտատերերին վիրավորելուց, զրպարտելուց, վախեցնելուց կամ անհանգստացնելուց կամ Օգտատիրոջ կերպարի վրա հարձակվելուց: Չերծ մնալ այլ Օգտատերերի էլեկտրոնային փոստի հաշիվներ մուտք գործելուց.
- Չերծ մնալ համակարգչային վիրուսների, կոռումպացված ֆայլերի կամ որևէ այլ ծրագրային ապահովման ներմուծումից, որոնք կարող են վնասել կամ փոփոխել Գլովոյի կամ երրորդ անձանց կողմից ներկայացված բովանդակությունը կամ համակարգերը.
- Չերծ մնալ մի շարք մարդկանց զանգվածային և (կամ) պարբերական էլեկտրոնային նամակներ ուղարկելուց կամ երրորդ անձանց էլեկտրոնային փոստի հասցեներն առանց նրանց համաձայնության ուղարկելուց.
- Չերծ մնալ ապրանքներ կամ ծառայություններ գովազդելուց՝ առանց Գլովոյի նախնական համաձայնության:

Ցանկացած Օգտատեր կարող է հաղորդել մեկ այլ Օգտատիրոջ մասին, եթե կարծում է, որ վերջինս խախտում է սույն Օգտագործման Ընդհանուր Դրույթները: Նմանապես, ցանկացած Օգտատեր կարող է տեղեկացնել Գլովոյին սույն դրույթների ցանկացած չարաշահման կամ խախտման մասին Կոնտակտային Ձևաթղթի միջոցով: Գլովոն հնարավորինս շուտ կստուգի նման հաղորդումները և կձեռնարկի ցանկացած քայլ, որը կարող է նպատակահարմար համարել՝ իրավունք վերապահելով հեռացնել և (կամ) կասեցնել ցանկացած Օգտատիրոջ կողմից Հարթակ մուտք գործելը կամ դրա օգտագործումը՝ սույն Օգտագործման Ընդհանուր Դրույթները խախտելու համար: Ավելին, Գլովոն իրեն իրավունք է վերապահում հեռացնել և (կամ) կասեցնել անօրինական կամ վիրավորական բովանդակությամբ ցանկացած հաղորդագրություն՝ առանց նախնական նախազգուշացման կամ հետագա ծանուցման:

## **9. Ապագրանցումը Օգտատերերի Կողմից**

Օգտատերերը կարող են ապագրանցվել Հարթակից՝ հարցում ուղարկելով հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեին՝ [infoglovostore@glovoapp.com](mailto:infoglovostore@glovoapp.com):

## **10. Գլովոյի Պատասխանատվությունը և Պարտականությունը**

Օգտատերերը պատասխանատու են անհրաժեշտ ծառայություններ և սարքավորումներ ունենալու համար՝ ինտերնետից օգտվելու և Հարթակ մուտք գործելու համար: Օգտատերերը կարող են Գլովոյին հայտնել Հարթակ մուտք գործելու ցանկացած խոչընդոտի կամ խնդրի մասին՝ օգտագործելով Օգտատերերին հասանելի կոնտակտային ուղիները, և Գլովոն կվերլուծի միջադեպը և կտեղեկացնի Օգտատիրոջը՝ ինչպես լուծել այն հնարավորինս արագ:

Գլովոն չի վերահսկում և պատասխանատվություն չի կրում Օգտատերերի կողմից Հարթակի միջոցով վերբեռնված բովանդակության համար, և Օգտատերերն են բացառապես պատասխանատու նման բովանդակության օրինականության համար:

Գլովոն պատասխանատվություն չի կրում ծառայության ընդհատումների, կապի ընդհատումների, համացանցի անհասանելիության կամ անսարքության, համացանցի ընդհատումների կամ իր վերահսկողությունից դուրս որևէ այլ հարցերի համար:

Գլովոն պատասխանատվություն չի կրում անվտանգության խնդիրների համար, որոնք կարող են առաջանալ ինչպես նաև վնասի համար, որը կարող է պատճառվել Օգտատիրոջ համակարգչային համակարգին (ապարատային և ծրագրային ապահովում) կամ այնտեղ պահվող ֆայլերին կամ փաստաթղթերին հետևյալի հետևանքով՝

- Վիրուսի առկայությունը Օգտատիրոջ համակարգչային համակարգում կամ բջջային հեռախոսում, որն օգտագործվում է Հարթակի բովանդակությանը և ծառայություններին միանալու համար.
- Բրաուզերի անսարքությունը.
- Դրանց հնացած տարբերակների օգտագործումը:

## **11. Մտավոր Սեփականություն**

Գլովոն Կայքում ներառված մտավոր և արդյունաբերական սեփականության բոլոր իրավունքների, ինչպես նաև դրա միջոցով հասանելի բովանդակության սեփականատերն է կամ լիցենզառուն: Հարթակի մտավոր սեփականության իրավունքները, ինչպես նաև Հարթակում ներառված տեքստը, պատկերները, գրաֆիկական ձևավորումը,

Թարմացված է՝ 05/03/2021

զննարկման կառուցվածքը, տեղեկատվությունը և բովանդակությունը, պատկանում են Գլուխին, որն ունի բացառիկ իրավունք՝ օգտագործելու դրանից բխող իրավունքները ցանկացած ձևով՝ մասնավորապես վերարտադրման, տարածման, հանրությանը հաղորդման և վերափոխման իրավունքները՝ մտավոր և արդյունաբերական սեփականության իրավունքների մասին Հայաստանի օրենսդրությանը համապատասխան:

Չնայած վերը նշվածին, Գլուխն չի կարող լինել այնպիսի բովանդակության սեփականատերը կամ լիցենզառուն, ինչպիսիք են, ի թիվս այլոց, այն ընկերությունների անվանումները կամ պատկերները, որոնց հետ Գլուխն գործնական հարաբերություններ չունի: Նման դեպքերում Գլուխն բովանդակությունը ձեռք է բերում հանրությանը հասանելի աղբյուրներից և Գլուխն ոչ մի դեպքում առնչություն չունի այլ ընկերություններին պատկանող իրավունքների հետ:

Օգտատիրոջը Հարթակ մուտք գործելու թույլտվություն տալը չի ենթադրում Գլուխի կողմից որևէ մտավոր կամ արդյունաբերական սեփականության իրավունքի հրաժարում, փոխանցում, օգտագործելու թույլտվության տրամադրում կամ իրավունքների ամբողջական կամ մասնակի փոխանցում: Գլուխ Հարթակի բովանդակությունը ջնջելը, շրջանցելը կամ որևէ կերպ աղավաղելը բոլորին արգելված է: Բացի այդ, Գլուխ Հարթակում ներառված ամբողջ բովանդակությունը կամ դրա մի մասը հանրային կամ առևտրային նպատակներով փոփոխելը, պատճենելը, վերօգտագործելը, շահագործելը, վերարտադրելը, հանրությանը հաղորդելը, դրանց երկրորդ կամ հետագա հրապարակումներ կատարելը, ֆայլեր վերբեռնելը, փոստով ուղարկելը, փոխանցելը, օգտագործելը, մշակելը կամ որևէ կերպ տարածելը նույնպես արգելված են, բացառությամբ Գլուխի կամ անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավունքների սեփականատիրոջ հստակ գրավոր թույլտվության առկայության դեպքում:

Ցանկացած Օգտատեր, ով Հարթակի միջոցով կիսվում է ցանկացած տեսակի բովանդակությամբ, հաստատում է, որ ունի դրա համար անհրաժեշտ իրավունքները՝ ազատելով Գլուխին տրամադրվող տեղեկատվության բովանդակության և օրինականության հետ կապված ցանկացած պատասխանատվությունից: Հարթակի միջոցով բովանդակություն տրամադրելով՝ Օգտատերերը անվճար և գործող օրենսդրությամբ թույլատրված առավելագույն չափով Գլուխին են փոխանցում նման բովանդակությունից բխող մտավոր կամ արդյունաբերական սեփականության օբյեկտներն օգտագործելու բոլոր իրավունքները:

## **12. Բաժանելիություն**

Եթե սույն Ընդհանուր Դրույթների դրույթներից որևէ մեկն օրենքի ուժով համարվի անվավեր կամ առոչինչ, ապա այդպիսի դրույթ(ներ)ը կհամարվեն

Թարմացված է՝ 05/03/2021

չներառված: Նման անվավերությունը չի հանգեցնի Համաձայնագրի մնացած դրույթների անվավերությանը, և նշված Համաձայնագիրը կմնա վավեր և ուժի մեջ Կողմերի միջև:

### **13. Կիրառելի Իրավունքը**

Գլովոյի և յուրաքանչյուր Օգտատիրոջ միջև հարաբերությունները պետք է կարգավորվեն և մեկնաբանվեն Ընդհանուր Դրույթների համաձայն, որոնց ստեղծումը, վավերականությունը և կիրարկումը կարգավորվում են Հայաստանի օրենսդրությամբ, իսկ վեճերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության դատարանների ընդդատությանը:

### **14. Վեճերի Այրնտրանքային Լուծում**

Ցանկացած ծագող վեճ կամ անհամաձայնություն պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության դատարանների ընդդատությանը: